

ՄԱՀ
ՍԵԴՐԱԿ ՔԱՐՅԱՆԻ
(1889—1978)

Հուլիսի 14-ին, երեքշաբթի օրը, Փարիզում, ծանր հիվանդությունից հետո, իր մահկանացուն է կնքում Փարիզի հայոց ս. Հովհաննես եկեղեցու Կրոնական Ընկերակցության վարչության վաստակաշատ ատենապետ տիար Սեդրակ Քարյանը:

Հանգուցյալը ծնվել էր 1889 թվականին հոկտեմբերի 25-ին, Խարբերդի Գեսրիկ գյուղում: Նա իր նախնական և երկրորդական կրթությունը ստացել է Խարբերդի Ֆրերների դպրոցում և ապա իր իրավաբանական կրթությունն ավարտել Կ. Պոլսի իրավաբանական համալսարանում:

Աստեղ էլ սկսվում է հանգուցյալի ազգային-հասարակական գործունեությունը, առաջնորդված հայ ժողովրդի մտահոգություններով:

Հանգուցյալը, որպես կարող փաստաբան, մինչև 1916 թվականը զբաղվել է փաստաբանությամբ:

Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո վերադարձել է Կ. Պոլիս և գործուն մասնակցություն ցուցաբերել մեր ազգային կյանքին:

Պոլսահայ պատրիարքարանի կողմից որպես ներկայացուցիչ ուղարկվել է Աթենք՝ հայ գաղթականների և որբերի վիճակը քննելու և համապատասխան տեղեկագիր ներկայացնելու:

1925 թվականից սկսած գործուն մասնակցություն է բերել Փարիզի մեր եկեղեցական ազգային կյանքին. «Անցիկա ազգային գետնի վրա մնաց միշտ տիրական ոեմք մը, մանավանդ Փարիզի հայ եկեղեցվո մեջ, ուր կվարեր վարչության ատենապետությունը: Ոչ ոք կրնա ուրանալ, թե Սեդրակ Քարյանը եղած է ազգանվեր անձնավորություն մը, որուն մահը նույնիսկ իր հառաջացյալ տարիքին, զգալի բաց մը կբանա մեր գաղութին ազգային կյանքի մեջ» («Ցառաջ», հուլիս 6. 1978):

Սեդրակ Քարյանը որպես վետերան անդամ հնչակյան կուսակցության եղել է նաև ջերմ հայրենասեր և Փարիզում Հայաստանի Օգնության կոմիտեի ընդհանուր քարտուղար:

Հանգուցյալը միաժամանակ եղել է Փարիզում Դպրոցասեր Տիկնանց վարժարանի իրավաբանական խորհրդատու, Հ.Բ.Ը. միության Եվրոպայի շրջանային հանձնաժողովի նախագահ:

Սեդրակ Քարյանը մեծ բարեկամն էր նաև Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Ամենայն Հայոց կաթողիկոսի:

1945 թվականին մասնակցել է ս. Էջմիածնում գումարված Ազգային եկեղեցական ժողովին՝ կաթողիկոսական ընտրության սահիթով:

Ամենայն Հայոց Տ. Տ. Վազգեն Ա Հայրապետը բարձրորեն գնահատելով պրն. Ս. Քարյանի եկեղեցանվեր, հասարակական հայրենասիրական գործունեությունը, նրան շնորհել է ս. Գր. Լուսավորչի առաջին կարգի ադամանդակուռ շքանշանով:

Սեդրակ Քարյանը հրաժեշտ է տալիս կյանքին այն խաղաղ խղճով, որ նվիրումով ծառայեց իր Մայր եկեղեցուն, Մայր Աթոռ ս. Էջմիածնին, իր հայրենիքին և իր ժողովրդին:

Հանգիստ իր ոսկորներին: